ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 127-Ա/3 «09» օգոստոսի 2024թ.

«Ֆուդսիթի» ՍՊԸ- ԻՆ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.1 Հաշվի առնելով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-24/55» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի օգոստոսի 8-ի որոշումը առ այն, որ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի փոխկապակցված անձինք («Կաուպերվուդ» ՍՊԸ-ն՝ 03.02.2024 - 03.02.2026թթ ժամանակահատվածով, «Սմարթլոգիսթիքս» ՍՊԸ՝ 10.02.2023-10.02.2025թթ ժամանակահատվածով և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն՝ 16.01.2024 - 16.01.2026 թթ ժամանակահատվածով) գտնվում են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և այն, որ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-24/55 ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի համաձայն Հավելված 1 Դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ իր հետ փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, ուստի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և 19-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի

գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող և այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը.

«Ֆուդսիթի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01028873, գործունեության հասցեն՝ ք. Երևան, Նոր Նորք 0090, Գայի պ/շ/11/20) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

8/9/2024

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 Հ. ՀԱԿՈԲՅԱՆ